



ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Գ Ն Ա Հ Ա Տ Մ Ա Ն Ե Վ Թ Ե Ս Տ Ա Վ Ո Ր Մ Ա Ն Կ Ե Ն Տ Ր Ո Ն

ՆՄՈՒՇ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԹԵՍՏ

ՏԱՐԲԵՐԱԿ 1

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Մի քեզի՛ գիմարդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան
անդրադառնալ ավելի ուշ:
Թեստ-գրգույքի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Մաղթում ենք հաջողություն

Թեստի կառուցվածքը և գնահատման չափանիշները

Թեստը կազմված է 3 բաժիններից, որոնք վերաբերում են գիտելիքների տարբեր ոլորտների՝ հայագիտություն, մաթեմատիկա և բնագիտություն: Բաժիններում ընդգրկված առաջադրանքների քանակներն են՝ հայագիտություն – 20, մաթեմատիկա և տրամաբանություն– 30, բնագիտություն – 30:

Առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում՝ 0:

Թեստի առավելագույն միավորը 80 է:


ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1) Ո՞ր նախադասության մեջ են ն՝ ենթական, և՛ ստորոգյալը ճիշտ ընդգծված (ենթական՝ մեկ գծով, ստորոգյալը՝ երկու):

- 1) Նայելով դեպի ձեղնահարկ՝ տանտիրուհին ձայնը ցածրացրեց:
- 2) Նրա նկարագրած տան պատշգամբը նայում էր փողոցին:
- 3) Ձեղնահարկի բնակիչը մեզ հայտնի ուսանողներից մեկն էր:
- 4) Կանայք, վախից ճչալով, երեսները մի կողմ շրջեցին:

2) Ո՞րն է տրված բարդ նախադասության գծապատկերը:

Ես եղել եմ երկնքին մոտիկ այն լեռնաշխարհում, ուր ծնվել է Տերյանը, և կարծես թե նա լի է այն մշուշային թախիծով ու քնքուշ երազներով, որ բնորոշում են մեր տաղանդավոր բանաստեղծի քնարը:



3

Բաց թողած տեղերում տրված բառերի տեղադրման ո՞ր տարբերակն է ճիշտ:

Գարնանը, երբ գետը, ավերից ՝ քանդում էր գետափի այգիների ցանկապատերը, վնաս տալիս մոտակա բոլոր և հաստաբուն ծառերը բերանն առած՝

(1. դուրս գալ, 2. մարգ, 3. հորդանալ, 4. փախչել)

- 1) 2, 4, 1, 3
- 2) 2, 1, 3, 4
- 3) 3, 2, 1, 4
- 4) 3, 1, 2, 4

4

Նախադասությունների տրամաբանական հաջորդականության ո՞ր տարբերակն է ճիշտ:

1. Նրանցից ոմանք հատուկ գնում էին տեսնելու, ոմանք էլ այդ կողմերով անցնելիս երեսը դարձնում էին՝ նայելու այդ հսկա անիվին, որ անողոք կտրում էր ծառերը:
2. Մոոցարանը 40 օրում սարքեցին, ու Կարմրաքարում սղոցներն սկսեցին զնգալ:
3. Բայց մարդիկ կային, որոնք ոչ միայն ոտք չէին դրել Կարմրաքար, այլև սղոցարանի մասին խոսք բացվելիս չէին կարողանում իրենց զայրույթը զսպել:
4. Այս նորույթը տեղի բնակիչների խոսակցության նյութն էր:

- 1) 2, 4, 1, 3
- 2) 2, 1, 4, 3
- 3) 4, 2, 1, 3
- 4) 4, 1, 2, 3

5

Առասպելական ո՞ր հերոսուհին «Սասնա ծռեր» էպոսից չէ:

- 1) Ծովինարը
- 2) Սաթենիկը
- 3) Արմադանը
- 4) Խանդուրը

6

Հովհաննես Թումանյանի ո՞ր ստեղծագործությունն է սկսվում հետևյալ տողերով:

Բարձրագահ Աբուլն ու Մթին սարեր
Մեջք մեջքի տված կանգնել վեհափառ,
Իրենց ուսերին Ջավախքից էլ վեր
Բռնած՝ պահում են մի ուրիշ աշխարհ:

- 1) «Փարվանա»
- 2) «Անուշ»
- 3) «Թմկաբերդի առումը»
- 4) «Հայոց լեռներում»

7

Ո՞ր ստեղծագործության դիմաց է հեղինակի անունը սխալ նշված:

- 1) «Սպիտակ ձին» – Ա. Բակունց
- 2) «Հասարակաց որդեգիրը» – Շիրվանզադե
- 3) «Ես և նա» – Նար-Ռոս
- 4) «Կանաչ դաշտը» – Հ. Մաթևոսյան

8

Ո՞վ է «Իմաստասիրության սահմանումներ» նշանավոր փիլիսոփայական աշխատության հեղինակը:

- 1) Դավիթ Անհաղթը
- 2) Անանիա Շիրակացին
- 3) Մխիթար Հերացին
- 4) Եզնիկ Կողբացին

9

Նշվածներից ո՞վ է կրկնակի օլիմպիական չեմպիոն:

- 1) Արթուր Ալեքսանյանը
- 2) Յուրի Վարդանյանը
- 3) Ալբերտ Ազարյանը
- 4) Լևոն Ջուլֆալակյանը

10

Երևանի ո՞ր թատրոնը որևէ գրողի անունով չի կոչվում:

- 1) Պետական ակադեմիական մայր թատրոնը
- 2) Կոմեդիայի թատրոնը
- 3) Տիկնիկային թատրոնը
- 4) Երևանի դրամատիկական թատրոնը

11 Համապատասխանեցրե՛ք բառերն իրենց իմաստներին:

Իմաստներ

Բառեր

- Ա. մի կերպ ներս թափանցել
- Բ. երկու առարկաների միջև պատնեշ սարքել
- Գ. շռայլորեն և անտեղի ծախսել
- Դ. պահանջված մակարդակին, ձևին համապատասխանել

- 1. անջրպետել
- 2. վատնել
- 3. խեղաթյուրել
- 4. սպրդել
- 5. պատշաճել

Ա	Բ	Գ	Դ

12 Համապատասխանեցրե՛ք գործիչների անունները նրանց գործունեության տեսակներին:

Գործունեության տեսակը

Գործիչ

- Ա. ռազմական օդանավերի ստեղծող
- Բ. կոմպոզիտոր
- Գ. կրկեսի դերասան, ծաղրածու
- Դ. թատրոնի և կինոյի դերասան

- 1. Արմեն Զիգարիանյան
- 2. Լեոնիդ Ենգիբարյան
- 3. Արտեմ Միկոյան
- 4. Տիգրան Մանսուրյան
- 5. Տիգրան Պետրոսյան

Ա	Բ	Գ	Դ

13 Ո՞ր արքայատոհմից է Տիգրան Մեծը:

- 1) Արշակունիներ
- 2) Երվանդունիներ
- 3) Արտաշեսյաններ
- 4) Բագրատունիներ

14 Ո՞րը Մեծ Հայքի նահանգ չէ:

- 1) Աղձնիք
- 2) Էրզրում
- 3) Սյունիք
- 4) Այրարատ

15 Նշված պատմիչներից ու՞մ են անվանել Քերթոզահայր, Պատմահայր:

- 1) Փավստոս Բուզանդ
- 2) Ագաթանգեղոս
- 3) Մովսես Խորենացի
- 4) Սեբեոս

16 Ե՞րբ է անկախ հռչակվել Հայաստանի Հանրապետությունը:

- 1) 1990 թ.
- 2) 1993 թ.
- 3) 1991 թ.
- 4) 1992 թ.

17 Նշվածներից ո՞վ է Սարգսրապատի ճակատամարտի մասնակից զորահրամանատարներից:

- 1) Թովմաս Նազարբեկյան
- 2) Ադասի Խանջյան
- 3) Անդրանիկ Օզանյան
- 4) Մովսես Միլիկյան

18 Նշվածներից ո՞վ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության ազգային հերոս:

- 1) Ալեք Մանուկյան
- 2) Սոս Սարգսյան
- 3) Կարո Հալաբյան
- 4) Սերգեյ Մերգելյան

19 Տրված քաղաքներից ո՞րը հայոց մայրաքաղաք չի եղել:

- 1) Արտաշատ
- 2) Վաղարշապատ
- 3) Տիգրանակերտ
- 4) Բայազետ

20 Արքաների անունները համապատասխանեցնել արքայատոհմերի անվանումներին:

- ա. Լևոն Մեծագործ
- բ. Գագիկ I
- գ. Տրդատ Մեծ
- դ. Արտավազդ II

- 1) Արշակունիներ
- 2) Երվանդունիներ
- 3) Ռուբինյաններ
- 4) Արտաշեսյաններ
- 5) Բագրատունիներ

ա	բ	գ	դ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

21 Հետևյալ իրադարձություններից ո՞րն է հավաստի:

- 1) Ամանորյա տոներին խանութը կվաճառի 1050 կգ կոնֆետ:
- 2) Բասկետբոլ խաղացող թիմերից մեկը կհաղթի մյուսին:
- 3) Գնացքը կժամանի ժամանակին:
- 4) Կինոյում ազատ նստատեղ չկա:

22 Ինչի՞նչ է հավասար այն պատահույթի հավանականությունը, որ զատը նետելու դեպքում կբացվի զույգ թվանշան:

- 1) $\frac{1}{4}$
- 2) $\frac{1}{6}$
- 3) $\frac{1}{2}$
- 4) $\frac{1}{3}$

23 Գտեք այն թվանշանը, որը տեղադրելով աստղանիշի փոխարեն՝ ստացված թվերը դասավորված կլինեն աճման կարգով. $3*5$, 365 , $*45$

- 1) 1
- 2) 4
- 3) 7
- 4) 3

(24-26) Տրված է 4 սմ երկարությամբ հավասարակողմ եռանկյուն:

24 Գտեք եռանկյան բարձրության երկարությունը:

- 1) 1 սմ
- 2) 2 սմ
- 3) $\sqrt{3}$ սմ
- 4) $2\sqrt{3}$ սմ


25) Գտեք եռանկյան պարագիծը:

- 1) 4 սմ
- 2) 12 սմ
- 3) 16 սմ
- 4) 8 սմ

26) Գտեք եռանկյան մակերեսը:

- 1) $2\sqrt{3}$ սմ²
- 2) $4\sqrt{3}$ սմ²
- 3) $8\sqrt{3}$ սմ²
- 4) $16\sqrt{3}$ սմ²

27) Գտեք A կետի կոորդինատները:



նկ. 1

- 1) (1, 2)
- 2) (-1, 2)
- 3) (2, 1)
- 4) (-2, 1)

28) Օգտվելով նկ.1-ից գտեք OA վեկտորի կոորդինատները:

- 1) $\{1; 1\}$
- 2) $\{2; 2\}$
- 3) $\{1; 2\}$
- 4) $\{2; 1\}$

29

Ո՞ր կետում $y = 2x - 1$ ուիղը հատում Ox առանցքը:

- 1) $\left(0; \frac{1}{2}\right)$
- 2) $\left(\frac{1}{2}; 0\right)$
- 3) $(0; -1)$
- 4) $(-1; 0)$

30

1-ից 100 թվերի մեջ քանի՞ անգամ է օգտագործվում 5 թվանշանը:

- 1) 10
- 2) 11
- 3) 19
- 4) 20

31

Քարտեզի մասշտաբը 1:12500 : Մեր և հակառակորդի դիրքերի միջև եղած հեռավորությունը քարտեզի վրա 5 սմ է: Գտեք մեր և հակառակորդի դիրքերի միջև եղած հեռավորությունը:

- 1) 615 մ
- 2) 625 մ
- 3) 2500 մ
- 4) 25000 մ

32

Խտացրած կաթի մեկ բանկան արժե 420 դրամ: Ամենաշատը քանի՞ բանկա խտացրած կաթ կարելի է գնել 24000 դրամով:

- 1) 56
- 2) 57
- 3) 58
- 4) 59

33

Քանի՞ անգամ է ամենամեծ երկնիշ թիվը փոքր ամենամեծ քառանիշ թվից:

- 1) 101
- 2) 11
- 3) 10
- 4) 100

34 Գտեք անհայտ բաժանելին՝ \square : $34 \div 2652$:

- 1) 78
- 2) 76
- 3) 90168
- 4) 87856

35 Ինչ թիվ պետք է գրել a տառի փոխարեն, որպեսզի $\frac{a}{4} = \frac{15}{20}$ հավասարությունը լինի ճիշտ:

- 1) 2
- 2) 5
- 3) 3
- 4) 10

36 Գտնել $x^2 - 5x + 6 = 0$ հավասարման արմատները:

- 1) $\{-2; 3\}$
- 2) $\{2; -3\}$
- 3) $\{-2; -3\}$
- 4) $\{2; 3\}$

37 Ժամը քանի՞սն է հիմա, եթե օրվա ավարտին մնացել է 2 անգամ քիչ ժամանակ, քան անցել է:

- 1) 12:00
- 2) 16:00
- 3) 8:00
- 4) 20:00

(38-39) Երկու բեռնատար իրար ետևից մեկնեցին միևնույն վայրը: Առաջինի բեռնատարի արագությունը 36 կմ/ժ է, երկրորդինը՝ 48 կմ/ժ:

38 Քանի՞ կմ ճանապարհ կանցնի առաջին բեռնատարը 2 ժամում:

- 1) 24
- 2) 96
- 3) 72
- 4) 18

39 Քանի՞ ժամ հետո երկրորդ բեռնատարը կհասնի առաջինին, եթե հայտնի է, որ առաջին բեռնատարը 2 ժամ շուտ էր մեկնել երկրորդից:


- 1) 5
- 2) 7
- 3) 6
- 4) 4

40 Գտեք օրինաչափությունը և գրեք բաց թողնված թիվը:

3, 4, 8, 17, 33, ..., 94

Պատ՝

41 Դիագրամի միջոցով տրված է 5 օրվա ընթացքում թշնամու կողմից մեր դիրքերի վրա արձակած կրակոցների քանակը: Օգտվելով դիագրամում բերված տվյալներից՝ հաշվեք, քանի՞ կրակոց է արձակվել 3-րդ և 5-րդ օրերի ընթացքում:



Պատ՝

42 Նկարում քանի՞ տարբեր ուղղանկյուններ կարելի է հաշվել:



Պատ՝

43 Քանի՞ անգամ պետք է ամենամեծ միանիշ թվին գումարել ամենափոքր երկնիշ թիվը, որպեսզի ստանալ ամենամեծ երկնիշ թիվը:

Պատ՝

44 Հաջորդականությունը տրված է n -րդ անդամի $a_n = 177 - 3n$ բանաձևով: Քանի՞ դրական անդամ ունի հաջորդականությունը:

Պատ՝

45 Գերանը 12 մասի կտրելու համար քանի՞ տեղից այն պետք է սղոցել:

Պատ՝

(46-49) Տրված է ուղղանկյունանիստ, որի բարձրությունը 7 է, իսկ հիմքի կողմերը՝ 5 և 8:

46 Գտեք ուղղանկյունանիստի կողմերի երկարությունների գումարը:

Պատ՝

47 Գտեք ուղղանկյունանիստի անկյունագծի երկարության քառակուսին:

Պատ՝



48 Գտեք ուղղանկյունանիստի հիմքի մակերեսը:

Պատ՝

49 Գտեք ուղղանկյունանիստի ծավալը:

Պատ՝

50 Ձախ մասում տրված յուրաքանչյուր ֆունկցիայի գրաֆիկ հանդիսացող զիծը համապատասխանեցրեք աջ մասում տրված բանաձևին:





1. $y = \frac{1}{x}$

2. $y = x$

3. $y = x^2$

4. $y = \sqrt{x}$



Ա	Բ	Գ	Դ

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

51 Ջրի խտությունը 1000 կգ/մ^3 է: Ի՞նչ է դա նշանակում:

- 1) 1 կգ ջրի ծավալը 1000 մ^3 է
- 2) 1000 կգ ջրի ծավալը 1000 մ^3 է
- 3) 1000 մ^3 ջրի զանգվածը 1 կգ է
- 4) 1 մ^3 ջրի զանգվածը 1000 կգ է


52 Ուսուցիչը հանձնարարեց աշակերտներին պատրաստել ֆիզիկական բանաձևերի պաստառներ: Ստուգելով աշխատանքները՝ նա ասաց, որ պաստառներից երկուսում բանաձևը ճիշտ է, մյուս երկուսում՝ սխալ: Ո՞ր պաստառներում են ճիշտ բանաձևեր գրված:

- 1) ա և բ
- 2) ա և դ
- 3) բ և գ
- 4) բ և դ

ա	$F = mg$	գ	$\rho = \frac{V}{m}$
բ	$A = \frac{F}{S}$	դ	$F = kx$

53 Ո՞րն է ջրաբաշխական մամլիչի մխոցների վրա գործադրվող F_1 և F_2 ուժերի ու մխոցների S_1 և S_2 մակերեսների միջև ճիշտ առնչությունը, եթե մխոցները հավասարակշռության վիճակում են (նկ.):

- 1) $\frac{F_1}{F_2} = \frac{S_1}{S_2}$
- 2) $\frac{F_1}{F_2} = \frac{S_2}{S_1}$
- 3) $\frac{F_1}{F_2} = \left(\frac{S_1}{S_2} \right)^2$
- 4) $\frac{F_1}{F_2} = \left(\frac{S_2}{S_1} \right)^2$



$$\frac{1}{F_2} \left(\frac{1}{S_1} \right)^2$$

54

Պղնձի տեսակարար ջերմունակությունը $380 \text{ Ջ}/(\text{կգ} \cdot ^\circ\text{C})$ է: Ի՞նչ է դա նշանակում:

- 1) $0 \text{ } ^\circ\text{C}$ -ում 1 կգ պղինձն անջատում է 380 Ջ էներգիա
- 2) 1 կգ պղնձի տաքացման համար անհրաժեշտ է 380 Ջ էներգիա
- 3) 1 կգ պղինձը $380 \text{ } ^\circ\text{C}$ -ով տաքացնելու համար անհրաժեշտ է 1 Ջ էներգիա
- 4) 1 կգ պղինձը $1 \text{ } ^\circ\text{C}$ -ով տաքացնելու համար անհրաժեշտ է 380 Ջ էներգիա

55

Ո՞ր պրոցեսի արդյունքում է գազի կատարած աշխատանքը զրո:

- 1) իզոբար
- 2) իզոխոր
- 3) իզոթերմ
- 4) ադիաբատ

56

Արժեքներից ո՞րը չի կարող ընդունել մարմնի լիցքի և տարրական լիցքի հարաբերությունը:

- 1) 1
- 2) 1,5
- 3) 2
- 4) -2

57

Ինչպե՞ս է կախված հաղորդչի էլեկտրական դիմադրությունը նրա լայնական հատույթի մակերեսից:

- 1) ուղիղ համեմատական է
- 2) հակադարձ համեմատական է
- 3) կախված չէ, հաստատուն մեծություն է
- 4) ուղիղ համեմատական է լայնական հատույթի մակերեսի քառակուսուն

58

Ո՞րն է սխալ շարունակությունը:

Հոսանքակիր կոճի մագնիսական ազդեցությունն ուժեղանում է, եթե.

- 1) միացնում են ռեոստատ:
- 2) մտցնում են երկաթե միջուկ:
- 3) մեծացնում են կոճի գալարների թիվը:
- 4) մեծացնում են նրանով անցնող հոսանքի ուժը:

59

Երևույթներից ո՞րը չի բացատրվում լույսի ուղղազիծ տարածմամբ:

- 1) Լուսնի խավարումը
- 2) սովերի առաջացումը
- 3) ծիածանի առաջացումը
- 4) Արեգակի խավարումը

60

Աշակերտը փորձով որոշում է ջրի բեկման ցուցիչը: Դրա համար նա լույսի ճառագայթը որոշակի անկյան տակ օդից գցում է ջրի մեջ և չափում բեկման անկյունը: Ինչպե՞ս են փոխվում ճառագայթի բեկման անկյունը և ջրի բեկման ցուցիչը՝ անկման անկյունը մեծացնելիս:

- 1) բեկման ցուցիչը փոքրանում է, բեկման անկյունը մեծանում է
- 2) բեկման ցուցիչը չի փոխվում, բեկման անկյունը փոքրանում է
- 3) բեկման ցուցիչը չի փոխվում, բեկման անկյունը մեծանում է
- 4) բեկման ցուցիչը և բեկման անկյունը մեծանում են

61

Ո՞ր պնդումն է ճիշտ:

Լույսի արագությունը.

- 1) կախված չէ միջավայրից:
- 2) կախված է աղբյուրի արագությունից:
- 3) վակուումում կախված չէ աղբյուրի արագությունից:
- 4) վակուումում կախված է հաշվարկման համակարգից:

62 Ո՞րն է ճիշտ շարունակությունը:

Համաձայն Թոմսոնի մոդելի, ատոմը.


- 1) գունդ է, որի ներսում պրոտոններ և էլեկտրոններ:
- 2) էլեկտրաչեզոք գունդ է, որի ներսում կան էլեկտրոններ:
- 3) դրական լիցքավորված գունդ է, որի ներսում կան էլեկտրոններ:
- 4) դրական լիցքավորված միջուկ է, որի շուրջը պտտվում են էլեկտրոններ:

63 Երևույթներից n -րդն է հիմք հանդիսանում եզրակացնելու, որ նյութն ունի ատոմային կառուցվածք.

- ա) բոլոր մարմինների ձգվելը Երկրի կողմից,
- բ) տաքանալիս մարմինների ընդարձակվելը,
- գ) հոտերի տարածումը:


- 1) միայն ա
- 2) միայն բ
- 3) միայն գ
- 4) բ և գ

64 Նկարում պատկերված է ներդաշնակ տատանումներ կատարող նյութական կետի կոորդինատի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է տատանումների պարբերությունը:




Պատ.՝

65 Նկարում պատկերված n° ր պրոցեսում հաստատուն զանգվածով իդեալական գազի ներքին էներգիան չի փոխվում:




Պատ.՝

66 Նկարում պատկերված էլեկտրական շղթայի տեղամասի R_1 դիմադրությունում հոսանքի ուժը 8 Ա է: Որքա՞ն է հոսանքի ուժը R_2 դիմադրությունում:



Պատ.՝

67 Նկարում n° ր թվով է նշված ուսանյակի կիզակետը:







Պատ.՝

68 Ձուրը իդեալական լուծիչ է, սակայն ոչ բոլոր նյութերն են լուծվում ջրում: Հետևյալ նյութերից որը չի լուծվում ջրում:

- 1) լվացքի փոշին
- 2) բուսական յուղը
- 3) կերակրի աղը
- 4) սպիրտը

69 Քիմիական նյութերի պիտակների վրա հաճախ տեղադրվում են համապատասխան զգուշացնող պայմանական նշաններ.

			
Այրվող նյութեր	Կերամաշող նյութեր	????????????	Թունավոր նյութեր

Ո՞րն է ծածկագրված բառը.

- 1) սարսափագրու
- 2) օքսիդիչ
- 3) պայթուցիկ
- 4) հոգեմետ

70 Ի՞նչ տեղի կունենա շաքարի քանակության հետ շաքարաջրի լուծույթում, եթե ջրի քանակը կրկնակի պակասի:

- 1) կկրկնապատկվի
- 2) կկիսվի
- 3) կմնա անփոփոխ
- 4) կքառապատկվի


71 Արյան ռժր խումբն ունեցող մարդիկ են համարվում համընդհանուր ռեցիպիենտներ:

- 1) առաջին
- 2) երկրորդ
- 3) երրորդ
- 4) չորրորդ

72 Ո՞ր վիտամինի թերվիտամինոզի դեպքում է ախտահարվում մարդու բերանի խոռոչի լորձաթաղանթը, զարգանում է լնդախտ (ցինգա) հիվանդությունը:

- 1) A
- 2) B₁
- 3) C
- 4) D


73 Ո՞ր օրգան-համակարգին է պատկանում ա տառով նշված օրգանը:



- 1) շնչառական
- 2) սիրտ-անոթային
- 3) մարսողական
- 4) հենաշարժիչ

74 Նկարում Ա կետի ազիմուտը քանի՞ աստիճան է կազմում:

- 1) 45°
- 2) 135°
- 3) 225°
- 4) 315°



75

Ո՞րն է Արեգակին ամենամոտ մոլորակը:

- 1) Մերկուրի
- 2) Երկիր
- 3) Վեներա
- 4) Մարս

(76-77) Պատկերում տրված է ՀՀ քարտեզը:



76

Քարտեզում Ստեփանավան քաղաքը ո՞ր տառով է նշված:

- 1) Ե
- 2) Բ
- 3) Է
- 4) Զ

77

Քարտեզում ո՞ր տառով է նշված Կոտայքի մարզը:

- 1) Ա
- 2) Գ
- 3) Դ
- 4) Բ

78 Ո՞րն է Վայոց ձորի մարզի մարզկենտրոնը:

- 1) Վանաձոր
- 2) Եղեգնաձոր
- 3) Աշտարակ
- 4) Հրազդան

79 Ստորև թվարկվածներից ո՞ր մարզի վարչական շրջանի տարածքն է ամենամեծը:

- 1) Կոտայքի
- 2) Սյունիքի
- 3) Լոռու
- 4) Արագածոտնի

80 Նշված քաղաքներից ո՞ր գույզն է գտնվում Շիրակի մարզում

- 1) Ճամբարակ և Բերդ
- 2) Ախթալա և Տաշիր
- 3) Մեծամոր և Սիսիան
- 4) Արթիկ և Մարալիկ